Տեղեկանք գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

~~Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան Սույն օրենքը կարգավորում է բարեգործության իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները, սահմանում է բարեգործության կարգավորման իրավական հիմքերը, նպատակները, իրականացման սկզբունքները, պետության կողմից բարեգործությանն աջակցելու ձևերը, բարեգործական կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունները:~~

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

**1. Սույն օրենքը կարգավորում է բարեգործության իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները, սահմանում է բարեգործության կարգավորման իրավական հիմքերը, նպատակները, իրականացման սկզբունքները, պետության կողմից բարեգործությանն աջակցելու ձևերը, բարեգործական կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունները:**

**2. Սույն օրենքի դրույթները տարածվում են անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի վրա, եթե «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքով այլ բան սահմանված չէ:**